վճռով Գրիգոր եպիսկոպոսին տուել է Ցէրութիւնը ի վայելումն և ի պահպանութիւն առաջնորդական տան 1372 բուբ. ռոճիկ արքունի գանձարանից, 4 կրպակք Իզմիրլի քաղաքում, 2 մեծ պագիք Ագքիրման քաղաքում, մի պարտէզ Գրիգորու Պօլում, 2000 դեսեատին հող Ագքիրմանի գաւառում Դենեսար գետի ափերում, հանդերձ իրաւամբ ձուկ որսալոյ գետումը. Ներսէս կաթողիկոսը այդ բոլորը ստանում է, երբ 1828 թ. գալիս է Քիշնև, բայց յետոյ, յայտնի չէ թէ ինչ պատճառաւ Ներսէսը յիշեալ 2000 դ. հողը դարձնում է Ցէրութեան այն պայմանաւ որ իւրաքանչիւր տարի այդ տեղւոյ փոխարէն Ցէրութիւնը տայ իւրեան փող այնքան որքան ստացում էր այդ հողից վարձ նրա ժամանակին այսինքն 712 բուբ. որը գումարելով 1372 բ. ռոճկի հետ անում է 2084 բուբ. որը և ստանում են այժմ առաջնորդները Բեսսարաբիոյ վիճակի. Դեռ մինչև ցայժմ յայտնի չէ թէ ի՞նչ ստիպողական պատճառներ յառաջ են եկել Ներսիսին մի այդպիսի մեծ սխալ և անհեռատես գործք տեսնել և 2000 դեսեատին հողից ձեռք վերցնել, բաւականանալով մի աննշան փոխարինութեամբ, մինչդեռ այժմ նոյն հողը հազարներ է բերում տարեկան վարձ. և թէ ունէր արդեօք Ներսէսը իրաւունք օտարացնելոյ այդ հողը, մինչդեռ տրուած էր այն ի կենսական տիրապետութիւն (пожизненное владѣніе). Նոյնպէս յայտնի չէ թէ ի՞նչ պատճառաւ Իզմիրլի քաղաքի կրպակների արդիւնքը չէ ստանում վիճակի առաջնորդը. Գրիգոր եպիսկոպոսը մեռած է 1827 թ. Աւստրիոյ Սուչաւայ քաղաքում և այնտեղ ևս թաղուած Ս. Հաճկատար Աստուածածին Հայոց վանքի բակում.

# ԱԶԳԱՅԻՆ

Ամսոյս 3-ին Ս. Վարդանանց օրը երեկոյեան ժամը 5-ից մինչև 7-ը փառաւոր հանդէս կատարուեցաւ ճեմարանի դահլիճում, ներկայութեամբ Նորին Վեհափառութեան և բոլոր Միաբանութեան Սրբոյ Էջմիածնի. Աշակերտները և ուսանողներն ասացին և կարդացին ճառեր, արտասանեցին բանաստեղծութիւններ, երգեցին առանձին (solo) և խմբով.

Նորին Վեհափառութիւնը բարեհաճեց յայտնել իւր գոհունակութիւնը թէ աշակերտների և թէ վարժապետների արած ջանից և ցոյց տուած յառաջադիմութեան համար, և մասնաւորապէս շեշտեց այն կէտի վերայ, որ իսկապէս ճեմարանի կէտ նպատակին է, այն է՝ բացատրեց որ ուսումն և զարգացումն, որ ստանում են նոքա, արդասաւոր և արդիւնաշատ կլինին այն ժամանակ, երբ ճեմարանը ծառայելով իւր բուն նպատակին, տայ ազգին և եկեղեցւոյն բարեկիրթ և անձնուէր հոգևորականներ. Հանդէսը վերջացաւ Նորին Վեհափառութեան օրհնութիւնով.